ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻԻՆ

ՄՈՍԿՎԱ

Նորին Սրբություն Ամենայն Ռուսիոց Պատրիարք Ալեքսիին.

Համահայկական ազգային-եկեղեցական ժողովը 1945 *թ. հունիսի* 22-*ին ս. Էջմիածնի նախաթոռ Մայր Տաճարում գաղտնի քվեարկությամբ միաձայն Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրեց արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանին, որի մասին տեղեկացնում եմ Ձեզ:*

Համազգային եկեղեցական ժողովի նախագահ, Տաճեն կիլիկիո կաթողիկոս
ԳԱՐԵԳԻՆ Ա

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ ԵՎ ՀԵՌԱԳՐԵՐ ՍՏԱՑՎԱԾ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԾՄԱՆ ԱՌԹԻՎ ԵՎ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ի. Վ. ՊՈԼՅԱՆՍԿՈՒ ՈՂՋՈՒՅՆԸ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Կառավարության անունից և անձամբ իմ կողմից շնորհավորում եմ Ձեզ հայկական եկեղեցու բարձր պաշտոնում, որպես ղեկավար առաջնորդ ընտրվելու կապակցությամբ:

Հավատացած եմ, որ Ձեր խմաստուն ղեկավարության ներքո Հայկական եկեղեցին նույնպիսի եռանդով, ինչպես Հայրենական մեծ պատերազմի տարիներում, կվճռի իր առաջ դրված պատասխանատու խնդիրները:

ՍՍՌ Միության Կառավարությունը ինձ հանձնարարել է որպես նվեր Ձեզ հանձնել մեկ հատ «ԶԻՍ—101» մարդատար ավտոմեքենա:

Մեծ հաճույքով կատարում եմ այդ տիրքան հաճելի հանձնարարությունը:

Ձեզ անկեղծորեն հարգող ՊՈԼՅԱՆՍԿԻ

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ի. Վ. ՊՈԼՅԱՆՍԿՈՒՆ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Սովետական Միության Կառավարության և անձամբ Ձեզ մեր ընտրության և օծման առթիվ մատուցած շնորհավորանքի հանդեպ և ուղարկված նվերի համար:

Սովետական Կառավարության հոգատարությամբ վերածնված և ծաղկող Սովետական Հայաստանում վերածնվել է հայ եկեղեցին և հայ հավատացյալները լիակատար հիմք ունեն անսահման երախտապարտ լինելու Սովետական Կառավարության և նրա ղեկավարին՝ Մեծ Ստալինին: Վերառաքում ենք մեր աղոթքները Բարձրյալին Սովետական Միության ծաղկման, նրա ղեկավարների և ամբողջ սովետական ժողովրդի երկար կյանքի համար:

Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոս ԳԵՎՈՐԳ Զ

Թ. 244
30 *Հունիսի* 1945 *թ.*

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԸ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի կառավարության անունից և անձամբ իմ կողմից շնորհավորում եմ Ձեր ընտրությունը որպես Հայ Եկեղեցու Գերագույն ղեկավարի:

Համոզված եմ, որ Ձեր հմուտ ղեկավարությամբ հայ Եկեղեցին նույնպիսի հաջողությամբ, ինչպես և Հայրենական մեծ պատերազմի տարիներին, կլուծի իր առաջ ծառացած պատասխանատու խնդիրները:

Ձեր ընտրության կապակցությամբ Հայկական ՍՍՌ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ կից Հայ Եկեղեցու գործերի Խորհուրդը որոշել է Ձեզ նվիրել 6—Н—1 ռադիո-ընդունիչ:

Խորհրդի այդ որոշումը կատարում եմ հաճույքով:

Հարգանքներով՝
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ս. Ն.

ՆՈՐԻՆ Ս. ԱԹՈՌԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Մեծահարգ Սուրեն Ներսեսովիչ.

Հաճեցեք ընդունել և հայտնել Մեր խորին շնորհակալությունը Սովետական հայ կառավարության Մեր ընտրության և օծման առթիվ նրա մատուցած շնորհավորանքի համար: Մենք Մեր սիրած Սովետական Հայրենիքի հարազատ և հավատարիմ զավակն ենք և կմնանք այդպիսին և նորա բարգավաճման ու խաղաղության համար մշտական աղոթողը:

ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս ՁԵՈՐԵՐՋՅԱՆԻՆ.

Ձերդ վեհափառության Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելու և օծվելու առիթով շտապում եմ սրտագին կերպով ողջունել Ձերդ սրբության: Ցանկանում եմ Ձեզ երկար կյանք և առողջություն, երկար ու երկար տարիներ, որպեսզի հայ եկեղեցին ծաղկի ու բարգավաճի Ձեր իմաստուն ղեկավարությամբ ի փառս Աստուծո:

Պատրիարք Մոսկվայի և Համայն Ռուսիո ԱԼԵՔՍԻՍ

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔ—ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱԼԻՍՏՐԱՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք կաթողիկոս ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

«Պրավդա» թերթի հաղորդագրությունից տեղեկացա, որ մեզ հարազատ հայ ժողովրդի կողմից Դուք ընտրվել եք Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք-կաթողիկոս: Եղբայրական ողջախառնությամբ շնորհավորում եմ Ձեզ սրբության ընտրությունը: Հղում եմ Ձեզ սրտագին բարեմաղթություններս ցանկանալով Ձեզ երկար կյանք և առողջություն հայ լուսավորչական նախամեծար Աթոռի ծաղկման և բարգավաճման համար, հայ եկեղեցական գործերը իմաստուն կերպով կարգավորելու համար:

Ողջ Վրաստանի պատրիարք կաթողիկոս
ԿԱԼԻՍՏՐԱՏ

ՀՍՍՌ Գ. Ս. Ռ. Գ. Ի. ՀԱՅԿԱԿԱՆ ... Общество ... ԳԻՏՈՒԹՅԱՆ Библиотека ...

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՇԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ՀԵՌԱԳԻՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻԻՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱԼԻՍՏՐԱՏԻՆ

Մոսկվա, Մոսկվայի և համայն Ռուսիո պատրիարք ԱԼԵՔՍԻԻՆ

«Շնորհակալություն եմ հայտնում շնորհավորանքների համար: Աղոթում եմ Ամենաբարձրյալին օգնել մեզ քրիստոնեական եկեղեցիների պատրիարքներիս՝ կատարելու մեր սրբազան պարտքը հայրենի եկեղեցիների և սովետական պետության հանդեպ:

Ամենայն Հայոց կաթողիկոս
ԳԵՎՈՐԳ Զ

Վրաստանի կաթողիկոս ԿԱԼԻՍՏՐԱՏԻՆ

Շնորհակալություն եմ հայտնում շնորհավորանքների համար: Աղոթում եմ Աստծուն օգնել հայ և վրացական եղբայրական եկեղեցիներին կատարելու իրենց սրբազան պարտքը Հայրենիքի և Սովետական Պետության հանդեպ:

Ամենայն Հայոց կաթողիկոս
ԳԵՎՈՐԳ Զ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՑ

Էջմիածին, Նորին Սուրբ օծության, Ամենայն Հայոց կաթողիկոս
ԳԵՎՈՐԳ ՉԵՈՐԵՔՉՅԱՆԻՆ

Ցնծությունը համակեց մեզ, երբ տեղեկացանք, որ Դուք ընտրվել եք Ամենայն Հայոց կաթողիկոս: Հայտնում ենք մեր ամենաանկեղծ շնորհավորանքները՝ ցանկանալով Ձեզ ուժ և կարողություն նորանոր հաղթանակների համար: Դուք արդեն հայ եկեղեցու պատմության նոր դարաշրջանի առաջատարն եք: Մենք աղոթում ենք Ամենաբարձրյալ Աստծուն օրհնել Ձեզ և Ձեր առաջնորդությունը և օգնել ու աջակցել Ձեզ Ձեր նախաձեռնությունների և Ձեր պարտքի կատարման ասպարեզում:

Ամերիկայի հայերի Ազգային Խորհրդի
նախագահ՝ ԵԶՆԻԿ
Գործադիր կոմիտեի նախագահ՝
ՎՐԹԱՆԵՍ
Քարտուղար՝ ՕՀԱՆՆ ՍԱՐՑԱՆ

Թավրիզից Ամենայն Հայոց վեհափառ
կաթողիկոս ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Շնորհավորելով Ս. Գր. Լուսավորչի Գահին բազմելդ, ցանկանում եմ առողջություն և երկար կյանք:

Նեքսես արքեպ. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆ

Իսպահանի եկեղեցական խորհրդից.

«Խնդրում ենք ընդունել մեր որդիական շնորհավորանքները»:

Գահիրե, «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան Կոմիտեից.

Երջանիկ ենք որդիական երկյուղածությամբ շնորհավորելու Ձեր ամենաարժանավոր ընտրությունը, որպես Ամենայն Հայոց կաթողիկոս:

ԼՈՆԴՈՆԻՑ, ԳԱԼՈՒՍՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԻ ՀՐԱՇԱՆԳՈՎ ՀԱԿՈԲՅԱՆԸ ՀԵՌԱԳՐՈՒՄ Է

Նորին Սուրբ օծության Ամենայն Հայոց
վեհափառ կաթողիկոսին

Լոնդոնի Սուրբ Սարգիս եկեղեցու հոգաբարձության նախագահ պարոն Գալուստ Գյուլբենկյանը հրահանգել է ինձ Ձերդ Նորին Սուրբ Օծությանը հղել յուր ջերմագին անձնական շնորհավորանքները, ընդ ամին և յուր ամենաանկեղծ գոհունակությունը միաձայնությամբ հայ եկեղեցու բարձրագույն առաջնորդ դեկավար ընտրվելու համար:

ԲՈՍՏՈՆԻՑ—ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԿԱԶ ՂԱԶԱՐՅԱՆԻՑ ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍՏՈՒԱՐՏԻՑ

Ձեզ ենք հղում մեր շնորհավորանքները և լավագույն ցանկությունները Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելու առթիվ: Մեր ժողովրդի, եկեղեցու հոգաբարձության անունից ցանկանում ենք Ձեզ ուժ և կորով: Հույս ունենք, որ Դուք ձեր անսպառ եռանդով ու կարողություններով Ամերիկահայ եկեղեցիների միասնականությունն ու բարեկեցությունը նոր ուժերով առաջ կմղեք:

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ—ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Հայկական պլուդրեսիվ լիգան շնորհավորում է Ձեզ միաձայնությամբ կաթողիկոս ընտրվելու առթիվ: Այսպիսի ընտրությունը ապացուցում է Ձերդ վեհափառության անհուն սերն ու նվիրվածությունը հանդեպ հայ ժողովրդի: Շնորհավորելով Ձեզ ցանկանում ենք առողջություն և արեշատություն: Դուք, Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում, ինչպես քաջ հովիվ, հայ ժողովրդին առաջնորդեցիք և տարաք Ձեր հայրենասիրական ուղիով, օժանդակելով փառապանծ Կարմիր Բանակին, որը հայ ժողովրդին ազատեց ֆաշիզմից, պսակելով յուր անունը հավերժական փառքով:

Ուղիական զգացմունքներով
Պրոգրեսիվ լիգայի քարտուղար՝
ՕԳՍԵՆ ՍԱՐՅԱՆ

ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅԻ, ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԻՄՈՆՅԱՆԻՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Դուք, որ հրեշտակի պես կառչել եք սուրբ տեղանքին և պահպանում եք այն հանուն ամեն կողմ սփռված հայերի և հանուն նրանց հոգևոր կյանքի բավարարման:

Ձնայելով Ձեր տարիքին, հավատացած ենք որ Աստված հնարավորություն կընձեռնի Ձեր վեհափառությանը, երկար տարիների համար ապահովելով Ձեր սկսած ղեկավարությունն ու առաջնորդությունը և Ձեր առաքելական ձեռքով հովանի կլինի աշխարհի ամեն կողմերը սփռված հայության միացյալ տրադիցիաներին ու ցանկություններին:

ԶԻԿԱԳՈՅԻ ՀԱՅԵՐԻՑ—ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Զիկագոյում դտնվող հայերս որդիական սիրով շնորհավորում ենք Ձերդ Վեհափառության ընտրությունը և ցանկանում ենք Ձեզ երկար կյանք և բազմաթիվ քաջառողջ տարիներ:

ՓԱՐԻԶ, ՀԱՅՐԱՊԵՏ ՄԵԼԻՔ ՄՈՒՇՂՈՒՄԲԱՐՅԱՆԻՑ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Ամենաանկեղծ կերպով շնորհավորում ենք Ազգային-Եկեղեցական ժողովին Գեվորգ Զ-ին կաթողիկոս ընտրելու և օծելու առթիվ:

ԼՈՆԴՈՆԻՑ—ԷՋՄԻԱԾԻՆ, ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Երիտասարդության Կենտրոնական Կոմիտեն և Գործադիր մարմինը շնորհավորելով Ձեր ընտրությունը ցանկանում են, որ Դուք երկար ու երկար տարիներ արդյունավետ ու ծաղկուն կերպով ղեկավարեք հայ եկեղեցին ու Մայր Աթոռը:

Էջմիածնի Երիտասարդության Կենտրոնական Կոմիտեի և գործադիր մարմնի նախագահ՝ ԴԻԼԲԱՐ ՄԵԼԿՀՈՂՄ

ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅԻՑ, ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Խնդրում եմ Ջերմագին շնորհավորանքներս հաղորդել Համազգային-եկեղեցական ժողովին, որը փառապանծ դարաշրջան է բաց անում մեր եկեղեցու պատմության մեջ:

«Կռունկ» թերթի խմբագրություն
ԳԱՌՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԲՈՍՏՈՆԻՑ, ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Սուրբ և փառապանծ Հայր, Ձեր Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելն ու սրբալույս օծումը բոլոր հայերի սրտերը լցրեց ցնծությամբ և գոհունակությամբ: Խնդրում ենք ընդունել մեր որդիական սիրո հանդիսավոր խոստումները, ցանկանալով, որ Բարձրյալը Ձեզ հովանավորի և ուժ ու կարողություն տա, որպեսզի դուք փառավորապես և դյուրին հանեք նրա սուրբ գործը:

ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻՑ—ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏԵՂԱԿԱԼԻՆ

Բուենոս Այրեսի հայկական համայնքը շնորհավորում և ողջունում է Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը ցանկանալով նրան արդյունավետ գործունեություն:

Փոխթեմակալ՝ Ներսես վարդապետ
ԴՈԼԲԱՋՅԱՆ

ԼՈՆԴՈՆ, ՇՆՈՐՀՔ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՍՏՅԱՆԻՑ

Նորին Վեհափառություն Ամենայն Հայոց կաթողիկոսին

Մեր պատգամավորները վերադարձան: Ցավում ենք, որ չենք ստացել մեր շնորհավորական հեռագիրը Ձեր Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելու առթիվ:

Լոնդոնի հայ հասարակությունը Ձեզդ վեհափառության է հղում իր ամենաջերմագին շնորհավորանքները, ցանկանալով Ձեզ ուրախ և հաջող դեկավարություն:

Սրտագին ողջունում ենք Սովետական Հայաստանի մեր հայրենակիցներին, նրանց ուղղելով մեր եղբայրական ողջույնների ջերմ հավաստիքը:

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՇԱԿ ՂԱՐԱԳՅՈԶԱՆԻՑ

Նորին Վեհափառություն Գևորգ Զ Ամենայն Հայոց կաթողիկոսին

Լոնդոնի Հայկական Բարեգործական ընկերության անունից թույլ տվեք ինձ Ձերդ Սուրբ Օծությանը շնորհավորել Լուսավորչի գահ բարձրանալը: Թույլ տվեք այս առթիվ Ձեզ մատուցել մեր Ջերմագին և սրտագին ողջույնները ու շնորհավորանքները, ցանկալ Ձեզ երկար կյանք և եռանդուն գործունեություն հայ ժողովրդի հոգևոր կյանքի կազմակերպման գործում:

Բացի սրանցից, ստացված են բազմաթիվ շնորհավորական հեռագրեր աշխարհի բոլոր կողմերից և Սովետական Միության բազմաթիվ քաղաքներից՝ Օդեսայից, Ռոստովից, Նախիջևանից, Սուխումիից, Կրասնոդարից, Բաքվից, Թբիլիսիից, Կիրովականից, Երևանից, Լենինականից, Սևանից և այլն, Սիբիրի զանազան քա-

ղաքների՝ Գահիրեի, Ալեքսանդրիայի, Բաղդադի, Բեյրութի, Դամասկոսի, Թեհրանի, Սպահանի, Թավրիզի, Նյու-Յորքի, Ֆիլադելֆիայի, Բոստոնի, Փարիզի, Լոնդոնի, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի զանազան քաղաքների համայնքներից, հոգևորականներից, հասարակական հիմնարկներից, թերթերի խմբագրություններից, հասարակական գործիչներից, ինչպես և մասնավոր անձերից։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ի պատասխան Նորին Սրբության ընտրության և օծման առթիվ ստացված շնորհավորական բազմաթիվ հեռագրերի, որոնք ստացվել են թե՛ Սովետական Միության զանազան քաղաքներից և թե՛ արտասահմանից, ուղարկել է հետևյալ հեռագիրը բոլոր թեմական առաջնորդներին.

«Մամուլի միջոցով հաղորդեցեք Մեր գոհունակությունն ու Հայրապետական օրհնությունը և բարեմաղթությունները թեմիդ այն հաստատություններին, թերթերի խմբագիրներին և առանձին անհատներին, որոնք հաճել էին շնորհավորել Մեր Հայրապետական ընտրությունն ու օծումը»։

ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ